

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2**  
**2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԻ ՆԻՍՏԻ**

**Մասնակցությամբ՝**

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ՝

Լ. Մուրադյանի  
Ա. Աղաբաբյանի  
Դ. Սամսոնյանի

ՀՀ Ոստիկանության Արմավիրի  
մարզային վարչության պետ՝

Տ. Եսայանի

ՀՀ ՊՆ Արմավիրի կայազորի ռազմական  
ոստիկանության բաժնի պետ՝

Ռ. Ներսիսյանի

ՀՀ Արմավիրի տարածքային զինվորական կոմիսար՝

Գ. Կարապետյանի

ՀՀ Էջմիածնի տարածքային զինվորական կոմիսարի  
պաշտոնակատար՝

Հ. Ազատյանի

Արմավիրի տարածաշրջանի բժշկական  
հանձնաժողովի ավագ բժիշկ՝

Բ. Փողբատյանի

Էջմիածնի տարածաշրջանի բժշկական  
հանձնաժողովի ավագ բժիշկ՝

Ա. Մուրադյանի

ՀՀ Արմավիրի մարզի դատախազության  
ավագ դատախազ՝

Ա. Կարապետյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի  
կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

Լրատվամիջոցների ներկայացուցիչների

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ**

1. 2010 թվականի աշնանային զորակոչի արդյունքների ամփոփում և 2011 թվականի գարնանային զորակոչի խնդիրների քննարկում:

/Գ. Կարապետյան -ՀՀ Արմավիրի տարածքային զինվորական կոմիսար  
Հ. Ազատյան -ՀՀ Էջմիածնի տարածքային զինվորական կոմիսարի  
պաշտոնակատար/

2. ՀՀ Արմավիրի մարզի դատախազության <<Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի կողմից թույլ տրված խախտումները վերացնելու մասին>> 19.04.2011թ. միջնորդագիրը քննարկելու մասին:

*/Յու. Մանվելյան -ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ/*

3. Սեփական եկամուտների հավաքագրման 2011թ. առաջին եռամսյակի արդյունքների և աշխատավարձերի ընթացիկ պարտքերի վերաբերյալ

*/Վ. Մկրտչյան -ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/*

4. Հայտարարություններ`

Յու. Մանվելյան -ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

Ա. Այվազյան -ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Ա. Ղուկասյան -ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ

Հ. Ալեքսանյան -ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ

Լ. Ալեքսանյան -Արմավիրի մարզային ԳԱՄԿ-ի տնօրեն

2010 թվականի աշնանային գորակոչի արդյունքների ամփոփման և 2011 թվականի գարնանային գորակոչի խնդիրների վերաբերյալ օրակարգային հարցի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզի զինկոմիսար Գ.Կարապետյանը տեղեկացրեց, որ 2010թ. աշնանային գորակոչի պլան-առաջադրանքը եղել է 414, որը ամբողջությամբ կատարվել է չնայած առաջ եկած դժվարություններին, որոնք հիմնականում կապված են եղել մարդկային ռեսուրսների բացակայության և հիվանդությունների հետ:

ՀՀ Արմավիրի տարածքային զինկոմիսար Գ.Կարապետյանը ՀՀ Արմավիրի մարզային գորակոչային հանձնաժողովի նախագահ, ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանին զեկուցեց, որ աշնանային գորակոչին չեն գորակոչվել ավտոդպրոց ավարտած 3 վարորդներ` առողջական խնդիրների պատճառով:

Գ.Կարապետյանը շնորհակալություն հայտնեց և նշեց, որ աշնանային գորակոչը պատշաճ մակարդակով ապահովելու գործում մեծ աջակցություն է ցուցաբերվել ՀՀ Արմավիրի մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, ոստիկանության և դատախազության կողմից:

Անդրադառնալով գարնանային գորակոչի նախապատրաստմանն ու անցկացման գործընթացին՝ Գ.Կարապետյանը տեղեկացրեց, որ գարնանային գորակոչի պլան-առաջադրանքը կազմում է 515 գորակոչիկ և արվում է ամեն ինչ՝ պլանային առաջադրանքը կատարելու նպատակով: 16.05.2011թ. կլինի առաջին գորակոչը և առայժմ դրա հետ կապված խնդիրներ չկան: ՀՀ Արմավիրի տարածքային զինկոմիսարը անդրադարձավ նաև կցագրմանը և նշեց, որ այն կատարվել է 71 %-ով և չկատարման պատճառը հիմնականում կապված է գրեթե թվով 150-ից ավել երիտասարդների ՀՀ-ից բացակայելու փաստի հետ:

Էջմիածնի տարածքային զինկոմիսարի պաշտոնակատար Հ.Ազատյանը օրակարգային առաջին հարցի կապակցությամբ գեկուցեց, որ աշնանային գորակոչի ընթացքում գորակոչային հանձնաժողովին ներկայացել են 824 գորակոչիկ: ՀՀ զինվորական կոմիսարի կողմից հաստատված պլան-առաջադրանքը կազմում էր 408 գորակոչիկ, ՀՀ զինված ուժեր գորակոչվել են 408-ը, որոնցից 373-ը 18 տարեկան են, իսկ 35՝ ավագ տարիքի: Պլան-առաջադրանքը կատարվել է ՀՀ-ից բացակայողների, հաշվառումից դուրս մնացածների, նախկինում խուսափողների և ԲՈՒՀ-երից դուրս մնացածների հաշվին:

2010թ-ի աշնանային գորակոչի ընթացքում զինկոմիսարիատ հրավիրված գորակոչիկներից 402 գորակոչիկների տրվել է տարկետում հետևյալ պատճառներով՝

- 77 գորակոչիկների տրվել է տարկետում ուսումը շարունակելու համար,
- 8 գորակոչիկների ընտանեկան դրության բերումով,
- 112 գորակոչիկներ ԿԲՀ-ի կողմից ճանաչվել են զինծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի և նրանց տրվել է տարկետում 3 տարի ժամանակով,
- 67 գորակոչիկների ԿԲՀ-ի կողմից բուժման նպատակով տրվել է տարկետում 1 տարի ժամանակով,
- 8 գորակոչիկների ԿԲՀ-ի կողմից բուժման նպատակով տրվել է տարկետում 6 ամիս ժամանակով,
- 79 զինակոչիկների կրկնակի վերազննման արդյունքում ճանաչվել են ոչ պիտանի և հաշվառվել են պահեստագոր,
- 44 գորակոչիկներ ճանաչվել են ոչ պիտանի ծառայության համար և վեազննման ենթակա չեն,
- 7 գորակոչիկներ ճանաչվել են զինծառայության համար ոչ պիտանի հաշվառումից հանելով:

2010թ. աշնանային գորակոչի ընթացքում ոստիկանության կողմից զինկոմիսարիատ են ուղարկվել 7 գորակոչիկներ, որոնցից 4-ը գորակոչվել են ՀՀ ԶՈՒ, 1-ը ԿԲՀ-ի կողմից ճանաչվել է ոչ պիտանի և հաշվառվել է պահեստագորում, 2-ը ճանաչվել են ոչ պիտանի և ենթակա չեն վերափորձաքննության:

Տարբեր ԲՈՒՀ-երից հեռացվել են 10 գորակոչիկներ, որոնցից գորակոչվել են 4-ը, մեկին տրվել է տարկետում 3 տարի ժամանակով, մեկին՝ 1 տարի

ժամանակով, իսկ 4-ը խուսափել են գորակոչից և նրանց վերաբերյալ նյութերը ուղարկվել են ոստիկանություն:

2010թ. աշնանային գորակոչի ընթացքում բարձրագույն կրթություն ունեցողներից 6-ը՝ ընդունվել են օրդինատուրա, 1-ը ընդունվել է ինտերնատուրա, 1-ը ԿԳՆ-ի ուղեգրով սովորում է ասպիրանտուրայում:

2010թ. աշնանային գորակոչի ընթացքում Հանրապետական հավաքակալանից առողջական վիճակի լրացուցիչ հետազոտման համար հետ են վերադարձվել 19 գորակոչիկներ, որոնցից 6-ը՝ գորակոչվել են ՀՀ ՁՈԻ, 1-ը ճանաչվել է ժամանակավորապես ոչ պիտանի և տրվել է տարկետում 3 տարի ժամանակով, 4-ը՝ ճանաչվել են ոչ պիտանի և վերազննման ենթակա չեն, 7-ին՝ ԿԲՀ-ի կողմից բուժման նպատակով տրվել է տարկետում 1 տարի ժամանակով, իսկ մեկին՝ տրվել է տարկետում 6 ամիս ժամանակով: Ավտոդպրոց ավարտած 77 գորակոչիկներից 65-ը գորակոչվել են ՀՀ ՁՈԻ, 5-ին տրվել է 3 տարի ժամանակով տարկետում, 2-ին տրվել է բուժման նպատակով տարկետում 1 տարի ժամանակով, 3-ը ճանաչվել են ոչ պիտանի և վերազննման ենթակա չեն, 1-ը ընդունվել է Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ, իսկ 1-ը՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ: Հիմնական խնդիրները կապված են ավտոդպրոց սովորող գորակոչիկների բժշկական գնման հետ: ԷՍԳ և սոնոգրաֆիկ հետազոտություն չանցկացնելու հետևանքով գորակոչի ժամանակ հայտնաբերվում են սրտային, միզաքարային և երիկամային հիվանդություններ:

2010թ. աշնանային գորակոչի ավարտից հետո գորակոչից խուսափել են 25 գորակոչիկներ, բոլորի վերաբերյալ նյութերն ուղարկվել են մարզային դատախազություն: Դրանից ոչ մի նյութ զինվորական կոմիսարիատ հետ չի վերադարձվել: Բոլորի վերաբերյալ հարուցվել են քրեական գործեր:

Հ.Ազատյանը տեղեկացրեց նաև կցագրման աշխատանքների մասին, ըստ որի՝ կցագրման ենթակա են 1995 թ. ծնված պատանիներից 1133-ը, անցել են կցագրում՝ 907-ը, որը կազմում 80 % , չեն կցագրվել 226-ը:

Նա նշեց նաև, որ Էջմիածնի տարածքային զինվորական կոմիսարիատում կատարվում է բոլոր նախապատրաստական աշխատանքները 2011թ. գարնանային գորակոչը որակյալ և ժամանակին կազմակերպելու և անցկացնելու համար: Ջորակոչին ենթակա 879 գորակոչիկներից ներկայացել են 804-ը, որից 268-ը գտնվում են հետազոտման մեջ, 241-ը ընդգրկված են համապատասխան խմբերում, 259 գորակոչիկ պատրաստ են ներկայանալ ԿԲՀ, իսկ 36-ը տարբեր պատճառներով օգտվում են տարկետման իրավունքից: Հ.Ազատյանը շնորհակալություն հայտնեց բոլոր շահագրգիռ կառույցներին գորակոչային աշխատանքներին աջակցելու համար:

ՀՀ Արմավիրի մարզպետ, ՀՀ Արմավիրի գորակոչային հանձնաժողովի նախագահ Ա.Ղահրամանյանը անդրադառնալով զինկոմների գեկույցներին՝ առավել մտահոգիչ համարեց գորակոչիկների առողջական խնդիրները, որոնք առաջանում են բժշկական թերի հետազոտությունների /ֆյուրոգրաֆ/ և բժշկական կազմերի ոչ լիարժեք աշխատանքների շնորհիվ: Մարզպետը անընդունելի և անհասկանալի համարեց այն փաստը, որ որոշ հիվանդություններ հայտնաբերվում են ավտոդպրոց ավարտած գորակոչիկների կամ մարզային բժշկական կազմերի կողմից առողջ համարված, իսկ

Հանրապետական բժշկական հանձնաժողովի կողմից հետ վերադարձված երիտասարդների շրջանում: Մարզպետն անդրադարձավ նաև կցագրման ոչ լիարժեք կատարմանը, որը զինկոմները պատճառաբանեցին ՀՀ -ից բացակայող երիտասարդների փաստով:

Ելնելով վերը նշվածից՝ ՀՀ Արմավիրի մարզպետ, ՀՀ Արմավիրի գորակոչային հանձնաժողովի նախագահ Ա.Ղահրամանյանը տվեց հետևյալ հանձնարարկանները.

1. ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Լ.Մուրադյանին՝
  - *Ապահովել բոլոր գորակոչիկներին անվճար հետազոտությունների կատարումը*
2. Բժշկական հանձնաժողովներին՝
  - *Խիստ պատասխանատու և հետևողական լինել վերը նշված աշխատանքներն իրականացնելիս և զերծ մնալ անառողջ և առողջական որոշ խնդիրներ ունեցող երիտասարդներին բանակ գորակոչելուց՝ անկախ բոլոր հանգամանքներից, հակառակ դեպքում պատասխանատու անձինք կենթարկվեն պատասխանատվության, քանի որ հիվանդ երիտասարդների գորացրումը ազդում է մեր պետության հեղինակության վրա, ինչպես նաև առաջացնում է բազմաթիվ ֆինանսական խնդիրներ:*
3. ՀՀ Արմավիրի և Էջմիածնի տարածքային զիկոմիսարներին՝
  - *Ըստ համայնքների մարզպետարան ներկայացնել չկցագրված երիտասարդների ցուցակը:*
4. ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՍ հարցերով վարչության պետ Ա.Ղուկասյանին՝
  - *Ամփոփել և ըստ համայնքների ներկայացնել ՀՀ-ից բացակայող երիտասարդների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը, ինչպես նաև ապահովել համայնքների ղեկավարների աշխատակազմերում համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով տվյալ աշխատանքները կատարողի արդյունավետ գործունեությունը:*

Օրակարգային երկրորդ հարցով հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Յու.Մանվելյանը՝ ՀՀ Արմավիրի մարզի դատախազության <<Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի կողմից թույլ տրված խախտումները վերացնելու մասին>> 19.04.2011թ. միջնորդագիրը քննարկելու մասին:

Յու. Մանվելյանը տեղեկացրեց, որ ըստ դատախազի կողմից ներկայացված միջնորդագրի, ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավար Սարգիս Գարեգինի Նահապետյանի կողմից իր պաշտոնական դիրքն օգտագործելով կատարվել է խոշոր չափերով գումարի յուրացում /միջնորդագիրը կցվում է/: Նա մասնավորապես նշեց, որ խախտումների հիմնական պատճառը հանդիսանում է համայնքներում իրականացվող ոչ ճիշտ գործակարգավարական փաստաթղթաշրջանառությունը, ճիշտ չեն տրվում ձևակերպումները, գումարների դուրս գրման ժամանակ չեն կազմվում համապատասխան փաստաթղթեր, որը և առաջացնում է մի շարք խնդիրներ:

ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը անդրադառնալով Յու. Մանվելյանի կողմից ներկայացված միջնորդագրին, փաստեց, որ որոշ համայնքների ղեկավարների աշխատակազմերում դեռևս մտահոգիչ է վերը թվարկված խնդիրների առկայությունը, քանի որ այդ համայնքների ղեկավարների աշխատակազմերում պարտադիր կարգով պետք է ապահովել աշխատանքային և կատարողական պատշաճ կարգապահությունը, կադրերի՝ մասնավորապես հաշվապահների գրագիտությունը և հաշվապահական հաշվառման կազմակերպումը, որպեսզի հետագայում չլինեն նմանատիպ խնդիրներ թե իրականացվող գործընթացներում և թե քննչական մարմինների հետ: Այդ գործընթացում մարզպետը կարևորեց մեղավոր անձանց պատասխանատվության խնդրի բարձրացումը և առաջարկեց համայնքների ղեկավարներին՝

➤ *Ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ նմանատիպ օրինախախտումները բացառելու համար:*

Օրակարգային երրորդ հարցի կապակցությամբ զեկուցեց ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ. Մկրտչյանը՝ համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման 2011թվականի առաջին եռամսյակի արդյունքների և աշխատավարձերի ընթացիկ պարտքերի վերաբերյալ: /Կցվում է:/

Անդրադառնալով Վ. Մկրտչյանի կողմից ներկայացված տեղեկատվությանը՝ ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը անընդունելի համարեց որոշ համայնքներում առկա ցածր ցուցանիշերը, որոնք իրենց ազդեցությունն են թողնում մարզի ընդհանուր ցուցանիշների վրա և հանձնարարեց Վ. Մկրտչյանին՝

➤ *կատարել ուսումնասիրություններ բոլոր այն համայնքներում, որտեղ սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշը կազմում է մինչև 30 % ոչ օբյեկտիվ հիմքերով առավել ցածր ցուցանիշներ ունեցող համայնքների ղեկավարներին հետագայում օրենսդրությանը համապատասխան պատասխանատվության ենթարկելու համար:*

Մարզպետը ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց զերծ մնալ համայնքներում այլ ծախսեր իրականացնելուց քանի դեռ լիարժեք չի սեփական եկամուտների բարձր ցուցանիշների ապահովման գործընթացը, ինչպես նաև անդրադարձավ ընթացիկ աշխատավարձերի պարտքերի կուտակմանը, որը ևս պատճառաբանվում է սեփական եկամուտների թերի հավաքագրումով և առաջարկեց դրանք ամբողջությամբ մարել մինչև 01.05.2011թ.:

Օրակարգային հարցերի քննարկման ավարտից հետո հայտարարություններով հանդես եկան ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Յու. Մանվելյանը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսական և բնապահպանության վարչության պետ Ա. Այվազյանը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Ղուկասյանը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և

հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Հ. Ալեքսանյանը, Արմավիրի մարզային ԳԱՄԿ-ի տնօրեն Լ. Ալեքսանյանը:

Իրավաբանական բաժնի պետ Յու. Մանվելյանն իր հայտարարությամբ նշեց, որ համայնքների ավագանիների կողմից ընդունված որոշումների ուսումնասիրությունների արդյունքում թվով 48-ի մեջ հայտնաբերվել են օրենսդրական տեխնիկայի կանոնների խախտումներ, որոնց վերաբերյալ մարզպետի համապատասխան գրություններ են ուղարկվել համայնքների ղեկավարներին՝ դրանք ուղղելու և օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու համար, սակայն առ այսօր 48-ից միայն 12-ն են ուղղվել:

Մարզպետ Ա. Ղահրամանյանը Յու. Մանվելյանի կատարած հայտարարության առնչությամբ առաջարկեց

➤ **համապատասխան ընթացակարգով շտկել համայնքների ավագանիների որոշումներում առկա թերությունները:**

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա. Այվազյանն իր հայտարարությամբ ներկայացրեց, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանը համագործակցելով գյուղատնտեսական ստոցիացիաների ֆեդերացիայի հետ կազմակերպում է վրացական արտադրության 34.4 % ազոտի պարունակությամբ պարարտանյութի բաշխման գործընթաց գյուղատնտեսական արտադրանք արտադրող տնտեսվարող սուբյեկտներին պարարտանյութն ինքնարժեքով հողագործին հասցնելու նպատակով: Ազոտական պարարտանյութի 1 տոննայի բաշխման արժեքն է 362.2 ԱՄՆ դոլարին համարժեք, կամ 1 պարկի համար 18.11 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ ՀՀ կենտրոնական բանկի տվյալ օրվա փոխարժեքով գումարի վճարման պահին: Երկաթուղային կայարանից վազոնից բեռնաթափման և տեղափոխման ծախսերը հոգում են համայնքները կամ նրանց լիազոր ներկայացուցիչները:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Ղուկասյանն իր հայտարարությամբ նշեց, որ բազմիցս համայնքների ղեկավարներին առաջարկվել է կարգավորել համայնքներում զինակոչիկներին գրանցամատյաններում հաշվառելու գործընթացը: Նա տեղեկատվության կարգով ներկայացրեց, որ առաջիկայում՝ մայիս ամսին նախատեսվում է ստուգումներ ՀՀ Նախագահի ռազմական տեսուչի կողմից և առաջարկեց կարգավորել և ավարտին հասցնել զինակոչիկների գրանցամատյանի վարման հետ կապված գործընթացը:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Հ. Ալեքսանյանը հանդես եկավ մի շարք հայտարարություններով, որոնցում պարզաբանման կարգով ներկայացրեց համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց /մշտական/, օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով եռամսյակային տեղեկատվություն, հողերի հողատեսքերի փոփոխման վերաբերյալ եռամսյակային տեղեկատվության տրամադրման, նպատակային նշանակության /կատեգորիաների/ հողերի 2011 թվականի կադաստրային արժեքների /գների/ և կադաստրային գուտ եկամուտի չափերի,

Հայաստանի Հանրապետությունում արտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգի և համայնքների ղեկավարներին լիազորված համապատասխան որոշմամբ և շինարարական թույլտվությամբ գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա հողի սեփականատերերին գյուղատնտեսական արտադրության շինություններ /անասնագոմ, թռչնանոց, ջերմատուն, ձկնաբուծարան/ կառուցելու թույլտվության վերաբերյալ /կցվում է:/

Արմավիրի մարզային ԳԱՄԿ-ի տնօրեն Լ. Ալեքսանյանն իր հայտարարությամբ մարզխորհրդի նիստի մասնակիցներին տեղեկացրեց, որ ապրիլ-մայիս ամիսներին տեղումների քանակը նախատեսվածից գերազանցելի է, որը մշակաբույսերի մոտ կառաջացնի մի շարք հիվանդություններ: Նա իրազեկեց, որ ԳԱՄԿ-ի կողմից մշակվել է մի շարք միջոցառումների ծրագիր, որը ներկայացվում է մարզային հեռուստարձևերությունների միջոցով, ինչպես նաև համապատասխան նյութերը բաշխվել են ըստ հասցեականության: Լ. Ալեքսանյանը առաջարկեց համայնքների ղեկավարներին վերը նշված տեղեկատվության մասին հնարավորինս շատ իրազեկել գյուղացիական տնտեսություններին: Լ. Ալեքսանյանը ավելացրեց նաև, որ ԳԱՄԿ-ում լինելու է հերթապահություն 9.00-22.00, գործելու է թե՛ հեռախոսագիծ և արվելու է ամեն ինչ վնասակար հիվանդությունները կանխելու համար:

Ամփոփելով վերը արված հայտարարությունները՝ ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը մարզխորհրդի նիստի մասնակիցներին տեղեկատվության կարգով ներկայացրեց, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունների ուշադրության կենտրոնում է գտնվում խաղողի մթերման հետ կապված խնդիրները, և հունիս ամսին նախատեսվում են հանդիպումներ ՀՀ Նախագահի և վարչապետի մոտ վերամշակող կազմակերպությունների ղեկավարների մասնակցությամբ, որպեսզի քննարկվեն խաղողի մթերման հետ կապված բոլոր խնդիրները, համատեղ լուծումներ գտնելու նպատակով: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև «Սարգիս Կարոյինա» ընկերության հետ՝ բանջարեղենի իրացման գործում և արվում է առավելագույնը տարբեր կազմակերպությունների հետ մրգերի և բանջարեղենի իրացումը արդյունավետ կազմակերպելու համար: Սարգպետն առաջարկեց նաև համայնքների ղեկավարներին մայիսի 9-ի միջոցառումներ կազմակերպեն համայնքներում:

Օրակարգային հարցերի քննարկման և հայտարարությունների ավարտից հետո ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը մարզխորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

???? ???????????

Արձ.՝ Մ. Առուշանյան May 17 2011 11:38 AM